ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 մայիսի 2016 թվականի N 149-Ա

1989-1998 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԾՆՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Զինապարտության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի, 17-րդ հոդվածի 2-րդ մասի, <<Այլընտրանքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի և ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 19-ի N 498-Ն որոշման 7-րդ կետի դրույթների՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի զինվորական կոմիսար, փոխգնդապետ Ա. Ասատրյանին՝ 2016 թվականի մայիս-հուլիս ամիսներին անցկացնել Հայաստանի Հանրապետության արական սեռի այն քաղաքացիների պարտադիր զինվորական և այլընտրանքային ծառայությունների ամառային զորակոչը, որոնց 18 տարին լրանում է մինչև 2016 թվականի հունիսի 30-ը ներառյալ, ինչպես նաև այն քաղաքացիների, որոնց նախկինում տրված՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման իրավունքը դադարել է մինչև 2016 թվականի հունիսի 30-ը ներառյալ:

2. Ստեղծել զորակոչային հանձնաժողով հետևյալ կազմով՝

1) Ա. Ասատրյան նախագահ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի զինվորական կոմիսար, փոխգնդապետ,

2) Կ. Գրիգորյան անդամ, Հայաստանի Հանրապետության ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Հրազդանի բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ,

3) Ա. Հակոբյան անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի պետ,

4) Ս. Սիմոնյան անդամ, ավագ բժիշկ, <<Հրազդանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության թերապևտ:

3. Հաստատել զորակոչիկների բժշկական քննություն անցկացնելու հանձնաժողով հետևյալ կազմով՝

1) Ս. Սիմոնյան թերապևտ, ավագ բժիշկ <<Հրազդանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերություն,

2) Ա. Ղազարյան վիրաբույժ <<Հրազդանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերություն,

3) Ն. Գրիգորյան ակնաբույժ <<Հրազդանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերություն,

4) Հ. Կարապետյան սրտաբան <<Հրազդանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերություն,

5) Հ. Մկրտչյան քիթ-կոկորդ-ականջ <<Հրազդանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերություն,

6) Լ. Համբարձումյան հոգեբույժ <<Հրազդանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերություն,

7) Ս. Խաչատրյան մաշկավեներաբան <<Հրազդանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերություն,

8) Ն. Գալստյան նյարդաբան <<Հրազդանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերություն,

9) Ն. Գրիգորյան բուժքույր <<Հրազդանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերություն:

4. Զորակոչիկների և զինծառայողների ընտանեկան և նյութական պայմանների ստուգման և ընտման համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

1) Վ. Հովհաննիսյան նախագահ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի զինվորական կոմիսարիատի զորակոչի բաժանմունքի պետ, մայոր,

2) Ա. Հակոբյան անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի պետ,

3) Համայնքի ղեկավար անդամ, ըստ բնակավայրի:

5. Բժշկական ընտություններ անցկացնող հանձնաժողովի անդամների վարձատրությունը կատարել Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի ապրիլի 19-ի N 483-Ն որոշման պահանջների համաձայն:

6. Մարզի բժշկական կենտրոններում զորակոչային տարիքի անձանց բժշկական ընտություններն իրականացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հուլիսի 10-ի N 748-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի համաձայն:

7. <<Հրազդանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Ռ. Սահակյանին՝

1) ժամանակին կազմակերպել այն պատանիների հետազոտումը և բուժումը, որոնք հանձնաժողովի կողմից ուղարկվել են հետազոտման կամ բուժման,

2) բժշկական հանձնաժողովին ապահովել անհրաժեշտ գույքով, սարքավորումներով և դեղորայքով:

8. Առաջարկել համայնքների ղեկավարներին, հանձնարարել ուսումնական հաստատությունների տնօրեններին՝ համաձայն զինվորական կոմիսարիատի կողմից զորակոչիկներին հավաքակայան ներկայացնելու գրաֆիկի և անհատական ծանուցագրերի, ապահովել զորակոչիկների ժամանակին և պարտադիր ներկայությունը զինվորական կոմիսարիատ:

9. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի զինվորական կոմիսար, փոխգնդապետ Ա. Ասատրյանին՝ զինվորական կոմիսարիատի սպասարկման տարածքում գտնվող ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպություններին ներգրավել <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով, զորակոչիկների փոխադրումներն իրականացնելու համար:

10. Հայաստանի Հանրապետության ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Հրազդանի բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Կ. Գրիգորյանին՝ զորակոչային տեղամասերում ապահովել հասարակական կարգի պահպանությունը և կազմակերպել զորակոչից խուսափող զորակոչիկների որոնումներն ու նրանց պարտադիր ներկայանալը զորակոչային տեղամաս:

11. Հայաստանի Հանրապետության ոստիկանության ճանապարհային ոստիկանության 2-րդ սպայական գումարտակի 3-րդ սպայական վաշտի հրամանատար, ոստիկանության մայոր Ա. Պետրոսյանին՝ ապահովել զորակոչիկների անվտանգ փոխադրումը զորակոչային տեղամասերից հանրապետական հավաքակայան:

12. Սույն որոշման կազմակերպումը և կատարումը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի զինվորական կոմիսար, փոխգնդապետ Ա. Ասատրյանի վրա:

13. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալ *Մ. Մանասյանի* վրա:

14. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ե. ԳՈՒԼՈՅԱՆ

2016 թվականի մայիսի 31
ք. Հրազդան